

« ընթերցող գրիտս՝ որ բազում աշխատեցա
« ի վերայ խաւարման Լուսնի և արարի
« աստ զնկարքս՝ վասն ուսումնաւոր եկեղե-
« ցականաց. և զՈղորմին մի խնայեմ » ։

Քաղմամբիւ ձեւեր կամ պատկերք կան արեւ
և լուսնի խաւարմանց՝ հանդերձ քացատրու-
թեամբք իբր 13 երես, թէ և զրաժին շատն
աւրեր է՝ որ յետոյ ի պէլագո հոռէ ։ Յե-
տոյ գրէ . « Կանոնք աստղաբաշխականք վասն
« պահպանելոյ զառողջութիւն մարմնոյ, շա-
« րագրեցեալք ի Գալիլանոսէ բժշկէն սեծէ » .
Խորագրանիւր ամիս օդն ինչպէս կ'ազդէ, ինչ-
պէս զգուշանալի է, ինչ ուտելի է, և այլն, ա-
սոնք են նշանակուած իբր 10 կամ 12
տողով : — « Մեկնութիւն արեգական ըն-
« թացման, Լուսնի և Մոլորականաց, և
« ասփերուն (?) խաւարման բոլորակին, այս զը-
« ժուարութիւնքս երեւեացին ի դիժքս » : —
Լուսնի և մոլորակաց զրից մեծ բոլորակ մ'այլ
գծած է, հաւանորէն լատինարէն զրքէ մի,
վասն զի ներքեւ մեծ տանդալս տառերով
գրած է *Figura aspectum quæ inseri
debet paginæ cxxxv primæ partis
Uranoscopiæ*. (այսինքն, Չեւ զրից կամ
երեմանց, զոր պէտք է գետեղել Երկնադի-
տութեան զրոց 185 երեքօրի) : — Դարձեալ,
շատ աղիւսակներ կան Լուսնի զրից, և Տու-
մարի առնից աւարց նկատմամբ միջանկեալ
էջ մի, « Հարցումն. Զինչ է կէտ կամ գիծ,
« մակերեկոյթ և մարմին » : Մէկ տեղ մ'այլ
մարդագէտ կլոր Արեգակ մի գծած է ամէն
կողմ՝ ճառագայթած, վրան գրուած՝ Պատկեր
Արեգական, բովը, « Ես եմ սկիզբն ժա-
« ւանականաց. քանզի յինէն զոյնասն Մա-
« սունք, և ի մասնց Ժամը, ի ժամոց
« Աւուրք և յաւուրց Շաբաթք, ի շաբաթոց՝
« Ամիսք, և ի ամսոց Տարիք. ի տարեաց
« Ժամանակք, և ի ժամանակաց Դարք : Այս
« ամենայն ի յիմ ընթացմանէն ծնանի » :

Մինչեւ այս տեղս յիշածներս Աւետիքի
այս մէջ հատոր զրոց կէսն էր, միւս կիսոյն
մէջ ալ նման և աննման, բարակ գիտնա-
կան՝ քիչ մ'այլ աղծարական՝ բանք կան.
Կոր յիշեն ոչ միայն երկար՝ այլ և դժուար
կ'ըլլար, գուցէ և ձանձրանալի, թէ և կան
և զուարճալիք ։

Շարայարեղի

ՀԱՅ ՈՐԻՍՆՈՑ

ՌԵԿԱԼԱՏՈՐ ԳԱՂԱԳԻՆ ՄԷՋ

ԻՏԱԼԻԱՑ զանազան քաղաքաց մէջ,
զլիաւորապէս ի Հռոմ, Նապոլի, Միլան,
վենետիկ, Պալուա, և այլն, գէպ ի թը-
շուառ և պանդուխտ մեր ազգայիններն եղած
մարդասիրական և կարեկցական ցոյցերն՝ ժա-
մանակին արդէն օտար և ընտանի լրագրաց
ձեռքով մի առ մի ծանուցուած են ընթեր-
ցող հասարակութեան : Վերջին օրերու մէջ
ալ Մասիս և Բիւզանդիոն, Ճէրիտիէի Շար-
գիյէ և այլն՝ իրարմէ քաղելով՝ ծանուցին հայ
հասարակութեան Ռէկանասի քաղաքին մէջ
Հայ-որբանոցի մը հաստատութեան լուրը.
բայց չեմ գիտեր ինչպիսի անտաղ աղբիւ-
րէ այդ լուրն առնում, և միանգամայն աշ-
խարհագրական անուանոց ճշգրտութեան ան-
փոյթ լինելով, հաղորդեմ էին վերոյիշեալ
լրագիրներն. իբր թէ Ռէկանասի քաղաքն
գտնուի Մոնակոյի մօտերը. այսպէս խալա-
կան քաղաք մի Փաղղոյ սահմանակից իշ-
խանութեան մէջ փոխադրելով, անշուշտ Մո-
նակոյ և Անկոնա անուանոց շփոթութեամբ.
և որպէս զի թիւրիմացութիւնք ուղղութիւն,
կը յանձնեմ Քաղմապիպի էջերուն հետեւեալ
տողերը, քաղելով կամ մանաւանդ բառ առ
բառ մէջ բերելով՝ քանի մը նամակներէ հա-
տուածներ, որք աղաղակ Ռէկանասութիւն ստա-
ցուած լինելով՝ զրոյին հմուտութիւն երաշ-
խաւոր ունին իրենց ճշմարտութեան ։

Մինչեւ ի նպաստ Հայոց կազմուած
ընկերութիւնք՝ իտալոյ զլիաւոր քաղաքներ,
բուն մէջ կը բացատրէին օրտառուչ և հա-
մակրական պարճուածներով զանազան համա-
խմբութեանց ու կրօնական և քաղաքական
թէ՛ բարձր և թէ՛ ժողովրդական կանաւներու
ձեռքով՝ մեր ազգին անցեալն ու ներկայն,
վերջին աղետալիւր գէպքերն և նոցա հետե-
ւանք տիրող տնտես վիճակն որբոց, աղքատաց,
պանդխտաց, սովիւրց, և այլն, այժման դու-

թիւնն և օգնութեան կարօտութիւնն, նոյն երկրին ոչ նշանաւոր անկեան մի մէջ, Ան-կոնայի մօտ Ռէկանատի քաղաքաւանին ազ-նաւարտի հայաւոր եպիսկոպոս մը, նոյն թե-մին՝ Տ. Մարիանոս Պրալի անուն աշուք քահանայի մը տաւալարութեան վրայ, Հայ-որբանոցի մը ծրագիրը կը մտմտար, և զայն հաստատելու միջոցներ կը փնտռէր, նաև մեր վանքի վարչութեան աշակցութիւնն ալ խըն-դրելու զանց չընելով՝ իւր բարեգործ նպա-տակին հասնելու համար:

Բարեբախտաբար գերագնիւ իշխանուհին Ա. Մ. Սկիպիոն Բորպեզէ, մի և նոյն ժա-մանակ փափաքելով իւր ծախիք ՁԿ հայ որբեր խնամել, առատաձեւն նուիրատութեամբ մի զօրացուց եպիսկոպոսին ձեռնարկը, և սկստն հաւաքուիլ որբեր, որոց տեսուչ և խը-նամոզ գրուեցաւ միաբանութեան ընտրուած Հ. Դանիէլ վ. Ստեփանեան, որ գնալով Ռէկանատի՝ անձնաւորէր եռանդեամբ գործին գլուխն անցած է, իրեկ հայր-որբոց առ այժմ միայնակ գործելու, հովանաւորութեամբ և մատակարարութեամբ տեղական եպիսկոպոսին և խնամակալ ժողովոյն, մինչև որ զործոյն ապագայ ընդարձակուիլն ուրիշ օգնականաց ալ կարեւորութիւն պահանջէ:

Այսպէս ուրեմն հաստատուեցաւ Ռէկա-նատիի Հայ երկսեռ մանկանոց որբանոցն, ուր ներկայիս երկու անգամով ժողովուած են Բորպեզէ իշխանազնին նպաստիլը վայելողը 14 մանչ տղայք, հինգ Արարկերցի և ինն Մալաթիացի: Նոյն իշխանուհին դարձեալ իւր առատաձեւութեամբ 10 աղջկունք ալ զրկած է ի Մոնտեմմանոյ ի Տոսկանա, աղջ-կանց զարոց մը, առ ի փորձ՝ յապագային թերևս ի Ռէկանատի փոխադրելու դիտա-ւորութեամբ, ուրիշ վեց աղջկունք ալ Ու-բանոցի խնամակալութիւնն որոշած է քիչ օրէն բերել ալ ի Մարաշէ, քաղաքին Ս. Ստեփանոսի կուսանոցին մէջ կրթել աշուտ նպատակաւ. որով ընդ ամէնն հասածնորով

և մերձաւոր հասնելիքներով՝ որոց թիւը կը լինի երեսուն:

Դեռ գործոյն սկիզբը լինելով՝ չեմ կարող, ինչպէս փափաքելի էր, աղայոց մասին մանր պարագաներով տեղեկութիւն տալ. երբ ըս-տուգագոյն ծանօթութիւններ ստանամ՝ պիտի չզանդաղիմ հաղորդելու հայ հասարակութեան:

Առ այժմ ի ձեռին ունիմ Հայ-Որբանոցի կազմակերպութեան վերաբերեալ որոշումները, յօդուած յօդուած բաժանուած և լատին-ի-տալ տալագրութեամբ հրատարակուած, զորս ի ստորև կը թարգմանեմ հայերէն, գնելով նախ Ռէկանատի քաղաքին վրայօք՝ վերայի-շեալ Մեծ. Հ. Դանիէլ Ստեփանեան վար-դապետէն՝ առ իս գրուած տեղեկութիւնները:

1897, փետր. 17. — « Զոր շոգնաւ-ւէն մեկնելէն (ի վերեակեան նաւահանգստի) քանի մը վայրկեան վերջը՝ ճիշդ ժամը հին-գին (երեկոյեան) ճամբայ ելաւ շոգնաւ... որ շատ արագ սուրալուն պատճառաւ՝ կրնար առաւօտեան ժամը հինգին հասցընել. սակայն քիչ մը մառախուղ ըլլալուն՝ վախճաւ որ ճամբան չկորսնցընէ, և ժամը չորսէն վերջը (առաւօտեան) սկսաւ նաւակի պէս երթով, այնպէս որ ուրիշ հազիւ հասանք: Այդպէս, որով եօթին շոգնակառքը կորսնցուցի... Մաք-սատունէն աղատելով՝ անմիջապէս կառք բռն-նեցի, քսան վայրկեանէ կայարան գնացինք, և հազիւ ժամը տասնին շոգնակառքին հասայ. ուսկից ալ մէկ ժամէն հասայ ի Փօրթո Ռէ-քանատի (Porto Recanati, Ռէկանատիի նաւամատոց), որ ծովեզերքի վրայ մեծկակ՝ այլ աղբատ առան մ'է: Հոն գտայ եպիս-կոպոսին կողմանէ եկած կանոնիկոս մը, ու-րուն հետ թղթատարի կառօք միշտ զէպ ի վեր ելլելով՝ մէկ ու կէս ժամէն հասանք Ռէքանատի քաղաքը:

« Քաղաքիս եպիսկոպոսը փողրկի, չորչը-րուկ, զբւարթ և եռանդուն ծերունի մ'է, որ սիրովիւր և փառաւոր ընդունելութիւն ըրաւ ինձ: — Ներկայիս կը զրկեմ քաղաքիս զանազան տեսարաններուն լուսանկարներն: Կ'ուզեմ Որբանոցիս աղայոց խմբին լուսան-կարն ալ հանել տալ, բայց կը սպասեմ մնացողաց հասնելուն՝ ծախքն՝ մէկ անգամէն ընելու համար: — Առ այժմ ընդարձակ

1. Ըստ վերջին լրոց՝ իշխանուհին այս Մա-լաթիացի աղայոց երեքը Հոգով զրկեր է, Ս. Փիլիպպոսի որբանոցը:

կղերանոցին մէկ մասիկ մը յատկացուած է Որբանոցին»։ Կղերանոցի մէջ է նաև իմ բընակութեանս, մինչև որ ժամանակին Ռասնաւոր շէնք մի յատկացուի Հայ-Որբանոցի համար» ։

1897, Ապրիլ 12. — « Ահա փափաքած տեղեկութիւններդ Ուէքանագիի վրայոյ՝ աշխարհագրական և պատմական տեսակետներով ։

« Միջին Խառնիյ Մարքէ (*Le Marche*) նահանգին Մաչերագա զաւուռին մէջ կ'իյնայ Ուէքանագի փոքրիկ քաղաքն, Աղրիականի ծովափունքէն իւր 10 քիլոմետր դէպ յարևմուտս, որոյ հետ միացած է համանուն նահանգըստաւն ։ Ուէքանագի քաղաքն առանձին առած՝ 9,000 բնակիչ ունի՝ քիչ աւելի կամ պակաս, իսկ *Porto Recanati* (Նաւահանգստին քով աւանն) ալ մէկտեղ առնելով՝ 15,000 կ'ըլլան բնակիչքն ։ Անգղիայէն շոգեկանօք եկող ուղևորն՝ յետ ժամ մի ճանապարհորդութեան՝ հոս պէտք է իջնէ և, ասկէց առլահանգակի կառօք մէկուկէս ժամէն կ'ելլէ ի քաղաքն ։ — Համառօտագոյն է իջնել ի Լորետոյ. այլ հոն առլահանգակի կառօք չգտնուելուն՝ վտանգաւոր է անօթի կառուպանաց անձնատուր ըլլալ, յորում միշտ փնտռով կ'ելլէ ուղևորն ։

« Գրեթէ զուգահեռական կ'ընթանան ի հիւսիսոյ Ուէքանագիի՝ Մաչանէ, և ի հարաւոյ՝ Բոդենցա գետերն ։ Շրջակայից գետինն ամբողջ ալէձև է, բլուրք և ձորք, հոգն՝ սքանչելի, քար բնաւ ։ Էլլիման բան զվենետիկ տաք չէ, այլ՝ զարմանալի բան, թերևս հովէ պաշտպանեալ ըլլալուն՝ հոս հասած անեհն ալ (փերք. 10) կարծես Ապրիլ ամսուան մէջ էինք. ամենորբեր սքանչելի կանաչութիւն կար, ձիթենիք ծիլեր արածրկած, նշենիին և դեղձենիին ծաղկած, և բակլան ալ թիղ մը բարձրացած, տեղացեաց անհոնը մշակութեամբ և հողոյն արդաւանքութեամբ իտալիոյ ամենէն բարեբեր պաւստաց մին կը կազմէ այս ալէձև երկիրս, որոյ ձէթն, պտուղքն և արմախի իւր գլխաւոր հարստութիւնն են ։ Յարեմուտս գաւառիս՝ հակայաձև կը բարձրանայ Ալպենեանց շղթայն, որ իւր ձիւնափայլ գագաթմամբ կարծես վսեմաբար կ'իշխէ գեղածածաղ բլուրցս վրայ ։

« Զարմանալի գիրք մ'ունի նաև Ռէքանագի քաղաքս. հետուէն եկող ճանապարհորդին աչաց շատ աւելի մեծ կ'երևի քան ինչ որ է իրապէս. վասն զի բլուրց շղթայի մը գագաթանն վրայ օձապտոյտ երկրի պէս երկայն տարածուած է, իւր 2000 մետր երկայնութեամբ. զոր ծայրէ ի ծայր յերկուս կը բաժնէ միակ փողոց մը, այլք կողմնակի անցք են՝ ձկան փողոց ձևով ։ Իսկ լայնքն 200 մետրն լանցնիւր ։ Նմանապէս ասոր շրջակայքն գտնուող ամէն միջնադարեան քաղաք և աւանք բլուրց գագաթն շինուած են. անշուշտ միջնակայ թշնամեաց դիրքաւ դիմադրելու համար. որպիսիք են Մաչերագա, Լորետոյ, Ուղիմոյ, Ֆլերմոյ, Գաստելֆիորատոյ, Ումանա, Բոդենցա, Բիւլենա, ևայլն, որոց շատին պարսպապատ ըլլալն նոյնը կը հաստատէ ։

« Բաւական թուով միջնադարեան պալատներ կը պարունակէ քաղաքս, որոց մեծագոյնքն մանաստանք և կառանոցք, որ քաղաքիս զեղեցկագոյն գիրքերն գրաւած են. սակայն շատերն՝ յետ իտալական օրինաց՝ գրեթէ բոլորովին պարապ են ։ Մէկ հատիկ նոր ձևով կամ հոյակապ շէնքն է *Palazzo Comunale* կամ *Municipio* (Քաղաքային վարչութեան պալատ) բնուածն, որ 20 տարիէ ի վեր սկսուած է և գեո ամբողջապէս լմացած չէ ։ Այն պաշտօնք ասոր մէջ ամփոփուած են *municiario*, *posta*, *questura*, *pretura*, (քաղաքապետութիւն, թղթատուն, ոստիկանատուն, դատարան), և այլն. իրաւցընէ փառաւոր շէնք մ'է՝ մեծագոյն քաղաքի մ'իսկ արմատաւոր Այս պալատին գիմաց՝ հրապարակին մէջտեղ կանգնած է տեղացի մեծանուն Լէորատի բանաստեղծին արձանն. որոյ ծննդեան առաջին զարագորձն ըլլալով յամին 1898, այժմէն պատրաստութիւնք կ'ըլլան շէնքերէն տունելու զայն ։

« Քաղաքիս ծագման նկատմամբ պատմական տեղեկութիւնք շատ որոշ չեն. ոմանք կը համարին թէ ի վեցերորդ դարու կանգնուած ըլլայ, Ռէչինա՝ հոսովեական քաղաքին՝ ի Գոթաց կործանմանէն վերջը. զորս յետոյ Ներուս պատերի Հայկազն հալածելով՝ ամբողջ իտալիա ազատեց անոնցմէ ։ Վերոս

յիշեալ քաղաքին աւերակք՝ հանդերձ ամփի-
թաարոնումն՝ կը տեսնուին զեռ յափունս
Բողենցա գետոյ : — Ստուգագոյն կը հա-
մարուի միւս կարծիքն թէ Ռէքանադի իբր
հռովմական ամրոց՝ զոյութիւն ունէր նա և
յառաջ քան զիործածումն Ռէշինայ : զոր կը
հաստատէ հռովմական արձանագրութիւն
մ՝ ալ, յորում կը յիշատակուի Ռէքանադի՝
հայրենիք Կզոյիտս Պոպիեմոս կայսեր Հռով-
մայ (237 թ. Ք.) :

« Յամին 1240 Ռէքանադի՝ քաղաքի
տիրոջս ստացաւ և թառ եպիսկոպոսութեան՝
ի Գրիգորէ թ. Քաւանայապետէ Հռովմայ,
և վերջոյ ի խանութեան ներքև էր մինչև
1860. յորմէհետէ ամբողջ զաւառաւն հան-
դերձ միացաւ իտալիոյ թագաւորութեան
հետ : — Միջին դարու մէջ իւր փայլն ա-
ւելցոյց իրեն մօտ ի Լորետոյ * Աստուածա-
մօր Ս. Կուսին ի Պաղեստինէ հրաշիւք այն-
տեղ փոխադրուած առնն, որոյ վրայ Սէքս-
տու Ե. Քաւանայապետն կանգնեց հոյակապ
տաճարն և յարակից պալատներն :

« Նշոյալէս հռչակաւոր էին ժամանակաւ
Ռէքանադիի տօնաւոյճառք, ուր կը զիմէին
բազմութեամբ ամէն աշխարհէ : Ունէր նաև
իրեն յատուկ փողերանոց » :

Այսպիսի ինչ վերոյիշեալ Ստեփանեան
վարդապետի նամակներէն քաղելով, կ'անց-
նիմ այժմ թարգմանելու Հայ-Որբանոցին
կազմակերպութեան օրէնքները :

ՍԱՀԱՄԱՆԱԳԻՐ

ԲԱՐԵՊԱՇԵ ԳՈՐԾՈՑ ՀԱՅԱՋԳԻ ՈՐԲՈՑ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ

Ի 25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1896

ա. — Ռէկանատի մէջ հաստատուեր է՝
շնորհիւ քանի մը կազմակերպիչ անձանց և

* Լա. Lauretum. Դափնոտ. այսպէս կո-
չուած է քաղաքս՝ ժամանակաւ այնտեղի դափ-
նեաց առատութեան պատճառաւ :

թեմական Եպիսկոպոսին վաւերացմամբ, Հայ-
ազգի Որբերու Բարեպաշտ Գործն, զոր
նաև Սրբազան Քաւանայապետն իւր յատուկ
օրհնագրով քաջաւերեր է :

բ. — Հաստատութեանս նպատակն է ժո-
ղովել հայազգի որբեր՝ զիրենք խաւիտի մէջ
կրթելու և դաստիարակելու համար՝ յատուկ
Որբանոցներու մէջ, մինչև իրենց կենաց քսան
և մէկ տարեկան հասակ :

գ. — Որբերու հաւաքման գործոյն մէջ
մեծադոյն յօժարութիւն ցոյց պիտի տրուի,
ընդունելու նախ այն մանկունք՝ որոց ծնողք
սպաննուած են, և վերջոց մէջ ալ զանոնք
մանաւանդ՝ որ բոլորովին զուրկ են օգնու-
թենէ և վաւանգաց ու կարօտութեան մէջ կը
գտնուին :

դ. — Խաւիտի մէջ հաստատուելիք Հայ-
Որբանոցներէն զուրս՝ առանձին խնամք պի-
տի ստանան այն որբերն, որք իրենց մատ-
ղայ հասակնուն կամ հիւանդութեան կամ
ամենամեղձաւոր ազգականաց անհրաժեշտ
խնամքի կարօտ լինելու պատճառաւ՝ պիտի
չկարենան Որբանոցաց մէջ խնամուիլ :

ե. — Բարեգործ Հաստատութեանս ան-
դամակից պիտի համարուին այն ամէն ան-
ձինք, թէ՛ արք եղեր են թէ՛ կանայք, որք
րնծայեն ի նպաստ Հայ-Որբանոցաց տարե-
կան տասն ֆրանկ (4 ռուբլի) :

զ. — Բարեգործական Հաստատութիւնս
պիտի մատակարարուի, վարուի և ներկայա-
ցուի յատուկ ժողովոյ մը ձեռքով, որ ինն
անդամներէ կը բաղկանայ, հետեւալ պաշ-
տօններով.

1. Նախագահ
2. Վեց խորհրդականք
3. Գանձապետ
4. Քարտուղար

է. — Նախագահի պաշտաման ժամանակն
ուահմանուած է նորոգուելու կամ փոփոխու-
ելու չորս տարին մէկ անգամ. իսկ մնացած
ուրթ անդամներէն՝ իւրաքանչիւր սարի երկու
անձի փոփոխութիւն պիտի կատարուի, նախ
քուէարկութեամբ և ապա տարեաց երի-
ցութեամբ. և հրաժարողաց կամ վախճանու-
ղաց տեղ ալ որ և իցէ ժամանակ յաջորդ
պիտի գրուի :

բ. — Բարեգործ Հաստատութեան Անգամակիցք առաջին անգամ պիտի հաւաքուին 1896 տարւոյս զեկտեմբեր ամսոյն երրորդ չորեքշաբթի օրը, խորհրդական Ժողովոյն Անդամօք ընտրութիւնը կատարելու համար, որք պիտի սկսին գործել 1897 տարւոյն յանուարի 1—էն սկսեալ, և զորձեալ յաջորդ տարւոյն նախագիծ ելեմտից կշիռը հաստատելու համար :

բ. — Բարեգործ Հաստատութեան կազմակերպող Անդամք՝ Խորհրդականաց Ժողովոյն փոխանորդութիւն պիտի ընեն՝ մինչև 1896 տարւոյս զեկտեմբերի 31, և ապա իրենց մասնակարարութեան հաշիւը պիտի ներկայացընեն :

ժ. — Ի վերջոյ Անգամակիցք տարին երկու անգամ պիտի հաւաքուին. նախ ապրիլ ամսոյ վերջին չորեքշաբթի օրը, նախընթաց տարւոյն հաշուեկշիւը քննելու և հաստատելու համար, և երկրորդ՝ հոկտեմբեր ամսոյ երկրորդ չորեքշաբթի օրը՝ յաջորդ տարւոյն նախագիծ հաշուեկշիւը հաստատելու համար, և տարւոյն մէջ փոփոխելիք երկու անգամոց ընտրութիւնը կատարելու համար : — Այս ժողովոց մէջ եթէ նոր առաջարկութիւնք լինին՝ քննութեան պիտի ենթարկուին :

ժա. — Ժողովոց հաւաքմունք տեղի պիտի ունենան Ռեկանատի մէջ, առանց կանխիկ հրաւիրազրի. ժողովատեղին պիտի լինի նոյն իսկ Որբանոցի մէջ, առաւօտեան ժամը 10ին ժողովքը կը բացուի՝ որ և իցէ թուով անգամներու :

ժբ. — Խորհրդական վարիչ ժողովն պիտի առաջարկէ Անգամակցաց հաստատութեան թէ՛ մատակարարութեան, թէ՛ զատկարակութեան և թէ՛ մտաւորական և կամ արուեստական կրթութեան որ և իցէ խնդիր. և հաստատուած վճռոց գործադրութեան պիտի հսկէ :

ժգ. — Որբոց կրթութիւնը պիտի կատարուի ըստ ուղղութեան Հայկական Եկեղեցւոյ՝ որ ի հաղորդակցութեան կայ ընդ Հոռոմեական Եկեղեցւոյն. և որքերը պիտի հրահանուին իրենց հայրենական բարոց և սովորութեանց և պատմութեանց մասին. հայերէն և իտալերէն լեզուները պիտի սովորին, և

պիտի վարձեցուին կամ արուեստից և կամ գիտութեանց մէջ իւրաքանչիւր իրեն մտաւորական ձրից կամ յատուկ բերմանց համեմատ :

ժդ. — Երկսեռ Որբանոցներու վարչութիւնն պիտի յանձնուի (որչափ որ հնար լինի) հայազգի կրօնաւորաց և հայազգի կուսանաց. և կրօնական աղօթք և արարողութիւնք Որբանոցաց յատուկ եկեղեցեաց կամ մատարանց մէջ՝ պիտի կատարուին հայկական իրենց հայրենի արարողութեամբ :

ժե. — Յառաջ քան որ և իցէ Հայ-Որբանոցի մը կառուցումն՝ պէտք է նոյն տեղւոյն թեմական Եպիսկոպոսէն հրամանագիր ստացուի :

ժզ. — Բարեգործ Հաստատութիւնս բաց ի տարեկան մուտքէն՝ զորս Անգամակիցք պիտի վճարեն, և բաց ի Որբերու աշխատանքէն յառաջ զալիք արդիւնքէն, պիտի ունենայ նաև հետեւեալ մուտքերը.

1. Որբութիւնը բարեպաշտից՝ որք պիտի հաւաքուին Որբանոցի եկեղեցեաց կամ մատարանց մէջ հաստատուած քանձանակներու ձեռքով :

2. Տարեկան հաւաքմունքով յոժարակամ տուբերու, որք պիտի խնդրուին ընդհանուր ֆրիստոնեայ աշխարհի Եպիսկոպոսներէն, և կրօնաւորական կարգաց կամ Միաբանութեանց Գլուխներէն. որք պիտի ժողովեն զայնս հաստատեալներէն, իւրաքանչիւր իրեն թեմին և իրաւասութեան ներքև գրանուած եկեղեցեաց մէջ :

3. Տարեկան 10 ֆրանկէն պակաս եղած որ և է ընծայատուութիւնը՝ ոչ անգամակցաց կողմանէ, և որ և իցէ անձէ ընծայուած կարգէ դուրս գումարներ :

ժե. — Ռեկանատի թեմէն դուրս եղած ամէն մուտքերը՝ իւրաքանչիւր թեմի մէջ հաստատուած յատուկ Պաշտօնակատարի մը ձեռքով պիտի հաւաքուին. իսկ վերջինս ալ պէտք եղած տեղը կարող է իրեն գործակից պաշտօնեաներ ունենալ :

ժբ. — Ամէն պաշտօնէից ալ աշխատութիւնն ձրի պէտք է լինի. բայց որ և իցէ օրինաւոր ծախք՝ պիտի վճարուին :

ժբ. — Ընծայատուութիւնք պիտի կարեն

նան ընդունուիլ նաև ընդ պայմանօք պա-
տարագներու մատուցման կամ ուրիշ կրօնա-
կան պաշտամանց կատարման՝ Որբանոցաց
յատուկ Եկեղեցեաց և մարանց մէջ :

Խ. — Ընդունելի պիտի լինին նաև պրամէ
դուրս որ և իցէ ընծայք՝ որք Որբոց խնամ-
քին կամ գործածութեան յարմար լինին, և
կամ նոցա վաճառման գնով՝ նպաստ լինի
Որբանոցներուն :

Խա. — Եթէ բարեբարներէն մին ուզէ որ
իւր կարգէ գորս մէկ ընծան մշտապէս պա-
հուի, Խորհրդակա՞նաց Ժողովն իւր պատաս-
խանատուութեան ներքէ պիտի առնու գայն :

Ն Ա Յ Ա Յ Ա Ն

✠ ՊԵՏՐՈՍ Անռանկան Եպիսկոպոս Դեր-
բէի Օգնական Եպիսկոպոսին Ռեկամատիի
և Լորետի :

Ինչպէս Սահմանադիրս յօդուածներէն
կ'երեի, Հայ-Որբանոցաց բարեգործ Հաստա-
տութեան վարչութիւնն յոյս ունի իւր ձեռն-
արկութեան ընդարձակութիւն և նաև ա-
պագայի մէջ ալ յարատեւելուն : — Այս-
պիսի աստուածահաճոյ օգտաւէտ և մեծահո-
գի գործոյ մը հաստատողաց և նպաստողաց
անշուշտ ի սրտէ երախտապարտ պիտի մնայ
ամէն մի հայ ազգային . յորոց ստորագրեալս
յատուկ յանդուրժիւն և անձնանուէր մշտա-
պէս համբերութիւն իւր արդիւնալից պաշտա-
մանց մէջ կը մաղթեմ հրապարակա այժ-
մեան վարիչ Հ. Դանիէլ Ստեփանեան վար-
դապետի, որուն ձեռքը յանձնեմ է Մխի-
թարեան Միաբանութիւնն փափուկ պաշտօնն
լինելու յիշատի հայր-որրոց, և այլ ազգային
թշուառութիւնէն ճողոպարած նշխարիկները
մեծցընելու և դարգացընելու կրօնասիրու-
թեան, ազգասիրութեան և ընկերասիրու-
թեան ճշմարիտ ուղղութեամբ, և փրկաւէտ
զաղափարներու գործնական կրթութեամբ :

Հ. Ա. Տիրոյեան

~

ՆՄՈՅԵ ՄԸ ՀԱՅ ԿԵՆԴԱՆԱՐԱՆՈՒԹԵԱՆ

(Շաբ. տես յէջ 188)

ՅԱՔԱՒ. որ հայ անձնատուութիւն
չի գիտեր թէ կարաւն Հայրենեաց ամենէն
ծանօթ հաւն է. ի Մուշ, ի Ռադէշ, յԵրե-
ւան, ի Էյարին, ի Պոնտոս, ի Սեբաստիա,
ի Տիգրանակերտ, ի Պարսկահայս և ի Ռու-
սահայս և հուսկ ուրեմն բովանդակ մեր աշ-
խարհին, սիրուն դալար մարգագետնոց մէջ,
պերճ պերճ ման գալով կը զարդարէ հայ մը-
շակին դաշտերը, և շատ անգամ պատուական
կեր կը լինի գեղջուկ սովալուկ հայ աղ-
քատին : — Ի վան, ի վան թող ձգաի մեր
ուշադրութիւնը, վանեցիք քալ են մեզ նկա-
րագրելու իրենց աշխարհին սիրուն հաւիլը :
Սակաւ մի ձգեմք մեր գրիչը և ուշ
գնեմք նոցա քալ կուրծքէն ելած ազու եր-
գերուն .

Արեւ տէպու (զպաւ) սարին վերէն,
Խօրօտիկ (սիրուն) Խօրօտիկ .
Կեաքեաւն ելաւ իւր բռնէն (քոյն) .
Բարեւ արեց ծաղկըներէն,
Թաւա եկաւ սարին ծերէն (ծայր)

Խօրօտիկ Խօրօտիկ

Այ սիրունիկ կեաքեաւիկ :

Նրբ կեաքեաւն ձայն կ'ը բաժ
Երդան ի վեր դէս կ'երիշկեմ (դէպ ի վեր նայել)
Կեաքեաւ կուգայ կըրկըրալով
Դարին վերէն շորորալով .

Այ Խօրօտիկ Խօրօտիկ,

Այ սիրունիկ կեաքեաւիկ :

Քեռ բռն հինաժ (նկարած, հիշատած) ծաղկընե-
րով .

Ուրհան նարկիւն նունուֆարով .

Քեռ տեղ լըցուած է շաղերով (ցօղ),

Դիւ կը մայլէս անմահ հոտով .

Այ Խօրօտիկ Խօրօտիկ

Այ սիրունիկ կեաքեաւիկ :

Քեռ փետուրներ են փափուկիկիկ,

Քեռ վիզն երկէն, կըտայ պզտիկ .

Քեռ Թեին գեռն (գոյն) է նըրշուշիկ,